***Կարգապահական գործ թիվ ԿԳ-16213***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունիսի 02-ի թիվ 88-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/56-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

դռնփակ նիստում քննության առնելով փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

24.09.2016թ.-ին դիմելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահին փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը (այսուհետ նաև Դիմող) հայտնել է, որ թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում 12.08.2016թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստի ընթացքում, երբ ինքը հարցեր է ուղղել փաստաբան Արամայիս Մելքոնյանին՝ վերջինիս կողմից ներկայացված միջնորդության կապակցությամբ՝ Արամայիս Մելքոնյանն իրեն պատասխանել է **«Հիվա՞նդ ես, ես ամեն ինչ պարզ գրել եմ»** արտահայտությամբ:

Դիմողը նաև հայտնել է, որ ինքն Արամայիս Մելքոնյանին ոտքի կանգնած վիճակում է հարցեր ուղղել, իսկ Արամայիս Մելքոնյանը դիտավորյալ նստել է այդ ժամանակ, իսկ երբ Դիմողը նույնիսկ դատարանի ուշադրությունն է հրավիրել այդ հանգամանքի վրա, Արամայիս Մելքոնյանը պատասխանել է. **«Երբ որ քեզ կպատասխանեմ, էն ժամանակ էլ ոտքի կկանգնեմ»**:

Դիմելով Պալատ՝ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել փաստաբան Արամայիս Մելքոնյանին:

**2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 24.10.2016թ. թիվ 440-Ա/ԿԳ-16213 որոշմամբ փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագրքի)** 5.1.2 ենթակետի և 5.2.1 ենթակետի առաջին պարբերության պահանջների խախտման հատկանիշներով

31.10.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին:

**3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

**3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>**

24.09.2016թ. Դիմողը՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ հայտնել է, որ դիմել է Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ փաստաբան Արամայիս Մելքոնյանի՝ իրեն զրպարտող տեղեկությունները հերքելու և դրամական փոխհատուցման պահանջներով:

Դիմողը գտել է, որ Արամայիս Մելքոնյանն իրեն «հիվանդ» անվանելով զրպարտել է, ինչպես նաև ակնհայտ և դիտավորյալ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել իր նկատմամբ:

Դիմողը հայտնել է, որ թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում 12.08.2016թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստի ընթացքում Արամայիս Մելքոնյանն իրեն ասել է՝ **«Հիվա՞նդ ես, ես ամեն ինչ պարզ գրել եմ»:**

Դիմողը հայտնել է նաև, որ ինքը նույն նիստի ընթացքում Արամայիս Մելքոնյանին դիմելիս ոտքի է կանգնել, մինչդեռ Արամայիս Մելքոնյանը դիտավորյալ ոտքի չի կանգնել, ինչին Դիմողը հրավիրել է Դատարանի ուշադրությունը և խնդրել Արամայիս Մելքոնյանին նկատողություն անել այդ կապակցությամբ, ինչից հետո անգամ Արամայիս Մելքոնյանը ոտքի չկանգնեց, այլ ասաց՝ **«Երբ որ քեզ կպատասխանեմ, էն ժամանակ էլ ոտքի կկանգնեմ»**:

25.11.2016թ. Ռուզաննա Տեր-Վարդանյանի դիմումին կից ներկայացվել է ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործով դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Ներկայանալով Խորհրդի նիստին՝ Դիմողը պնդել է դիմումում նշված հանգամանքները:

**3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>**

03.10.2016թ.-ին Պատասխանողի կողմից ներկայացվել է պատասխան բացատրություն, որում Պատասխանողը նախ փաստել է, որ Դիմումատուի դիմումի էությունը կայանում է նրանում, իբր Պատասխանողը նիստի ժամանակ կանգնած չի եղել և Ռուզաննա Տեր-Վարդանյանին անվանել է հիվանդ:

Բացի այդ, Արամայիս Մելքոնյանն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքին, որ դատական սանկցիաներ կիրառում է դատարանը և նիստի ընթացքում Դիմումատուն բազմիցս միջնորդել է դատարանին, որպեսզի իրեն նկատողություն հայտարարվի, սակայն Դիմումատուի միջնորդությունները մերժվել են:

Պատասխանողը նշել է նաև, որ բնականաբար հնարավոր է եղել է շատ զգացմունքային նշված նիստի ընթացքում, քանի որ իր դրամական միջոցները և գույքն անհիմն գտնվում էին արգելանքի տակ և նա չէր կարողանում հոգալ իր ընտանիքի տարրական հոգսերը:

Պատասխանողն առարկել է իր դեմ ներկայացված բողոքի դեմ և որակել այն անհիմն և նշել, որ այն նպատակ է հետապնդում ճնշել իրեն և հասնել իր և իր վստահորդների միջև կնքված պայմանագրի լուծմանը:

Պատասխանողն իր բացատրություններում ուշադրություն է հրավիրել նաև այն հանգամանքին, որ դիմումատու Ռուզաննա Տեր-Վարդանյանը բազմիցս իրեն վիրավորել է, պնդելով, որ դատական նիստի ընթացքում Ռուզաննա Տեր-Վարդանյանն իր առնչությամբ ասել է՝ **«Երևի թե Արամայիս Մելքոնյանը գտնում է, որ ինքը շատ խելացի է», «փաստաբանը սովոր է շեղելու, սուտ խոսելու, մարդկանց վրա ցեխ շպրտելու»:**

Պատասխանողը նշել է նաև, որ նույն նիստի ընթացքում Դիմումատուն իրեն հեգնանքով հարցեր է ուղղել, մասնավորապես՝ **«մինչ օրս Դուք Ձեր տանը կահույք չե՞ք ունեցել», «ինչի՞ սկսեցիք վաճառել Ձեր գույքը», «արդյոք միտումնավոր չէ Ձեր գույքերի վաճառքը»:**

13.12.2016թ. ներկայացված բացատրությունում Պատասխանողը նաև նշել է, որ ներկայացված դատական նիստի արձանագրության մեջ պարզ լսվում է կողմերի դիրքորոշումը, իսկ հստակ նա նման բան չի ասել, ավելին դա ակնհայտ է նաև նիստի կրիչից:

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

**3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>**

26.12.2016թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանն իր եզրակացությամբ նշել է, որ տվյալ դեպքում Դիմողը պետք է ապացուցի Պատասխանողի արարքի մեջ Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը այն է՝ փաստաբան՝ Արամայիս Մելքոնյանը Ռուզաննա Տեր-Վարդանյանին չի ընդունել որպես մասնագիտական աշխատակից և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք չի ցուցաբերել դիմող Ռուզաննա Տեր-Վարդանյանի նկատմամբ, ինչպես նաև դիմողը պետք է ապացուցի այն, որ փաստաբան՝ Արամայիս Մելքոնյանը թույլ է տվել դիմող Ռուզաննա Տեր-Վարդանյանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:

Նշված որոշման եզրափակիչ մասում կարգապահական գործը նախապատրաստող անձը նշել է, որ հաստատված է համարում վերոնշյալ փաստական հանգամանքները:

27.12.2016թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանին:

17.03.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանին՝ հաշվի առնելով, որ կարգապահական գործով նիստը նախագահող Մարտուն Փանոսյանի՝ որպես խորհրդի անդամի լիազորությունները 14.03.2017թ. դադարել են:

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

1) Թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում Դիմողը 28.06.2016թ.-ին հայց է հարուցել ընդդեմ Պատասխանողի, որի շրջանակներում 12.08.2016թ.-ին հրավիրվել է դատական նիստ:

*<u>Նշված փաստը հաստատվում է 12.08.2016թ.-ի նիստի արձանագրությամբ:</u>*

2) Թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում 12.08.2016թ.-ին հրավիրված դատական նիստը գործով պատասխանող Արամայիս Մելքոնյանի միջնորդության և դատարանի արձանագրային որոշմամբ այդ միջնորդությունը բավարարելու հիմքով անցկացվել է դռնփակ:

*<u>Նշված փաստը հաստատվում է 12.08.2016թ.-ի նիստի արձանագրությամբ:</u>*

3) Թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում 12.08.2016թ.-ին հրավիրված դատական նիստի ընթացքում Արամայիս Մելքոնյանը Դիմողի կողմից հարցեր հնչեցնելու ընթացքում հնչեցրել է հետևյալ արտահայտությունը՝ **«հիվանդ են արա»**:

*<u>Նշված փաստը հաստատվում է 12.08.2016թ.-ի նիստի արձանագրությամբ:</u>*

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 11.05.2017թ. տրամադրված N ԸԴՂ/255-17 տեղեկանքի համաձայն Արամայիս Մելքոնյանը արտոնագիրը ստացել է 20.10.2006թ.: Արամայիս Մելքոնյանի նկատմամբ 2006-2017թթ ժամանակահատվածում հարուցվել է 5 կարգապահական վարույթ[1], որից 4-ը գտնվում են քննության փուլում և ավարտվել է մեկը, որով կայացվել է հետևյալ որոշումը՝

- Խորհրդի 29.02.2008թ. թիվ 3/10 որոշմամբ Արամայիս Մելքոնյանի նկատմամբ անդամավճար չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով.

[1] Սույն թվի մեջ չի հաշվարկվում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 24. 10. 2016թ. թիվ 440-Ա/ԿԳ-16213 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը:

- Խորհրդի 22.08.2016թ. թիվ 373-Ա/ԿԳ-16197 որոշմամբ Արամայիս Մելքոնյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ (Կանոնագրքի 4.3. ենթակետի հատկանիշներով) հանձնվել է խորհրդին և կասեցվել է.
- Խորհրդի 12.01.2017թ. թիվ 04-Ա/ԿԳ-17001 որոշմամբ Արամայիս Մելքոնյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ (Կանոնագրքի 2.2.2, 2.2.3. և 2.6.1. ենթակետերի հատկանիշներով), գործը հանձնվել է խորհրդին.
- Խորհրդի 03.03.2017թ. թիվ 33-Ա/ԿԳ-17007 որոշմամբ Արամայիս Մելքոնյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ (Կանոնագրքի 5.1.2. և 5.2.1. (1) ենթակետերի հատկանիշներով), գործը հանձնվել է խորհրդին.
- Խորհրդի 21.03.2017թ. թիվ 68-Ա/ԿԳ-17019 որոշմամբ Արամայիս Մելքոնյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ (Կանոնագրքի 5.1.2. և 5.2.1. (1) ենթակետերի հատկանիշներով), որը նախապատրաստման փուլում է:

## 7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ *«Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ»:*

Նույն կանոնագրքի 5.2.1.(1) ենթակետի համաձայն՝ ***«Փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ»:***

Վերոնշյալ կանոնների վերլուծությունից ելնելով խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի վերոնշյալ ենթակետերով սահմանված կետերի խախտման առկայության կամ բացակայության փաստն արձանագրելու համար անհրաժեշտ է պարզել՝

- *Կանոնագրքի 5.1.2.ենթակետի մասով*
  - արդյոք Արամայիս Մելքոնյանի կողմից կատարվել են այնպիսի գործողություններ, որոնք վկայում են այն մասին, որ նա Ռուզաննա Տեր-Վարդանյանին չի ընդունել որպես մասնագիտական աշխատակից կամ վերջինիս նկատմամբ ցուցաբերել է ոչ անկեղծ կամ ոչ քաղաքավարի վերաբերմունք,
- *Կանոնագրքի 5.2.1.(1) ենթակետի մասով*
  - արդյոք Արամայիս Մելքոնյանի կողմից այլ փաստաբանի նկատմամբ թույլ է տրվել այնպիսի գործողություն (գործողություններ) կամ արտահայտություն (արտահայտություններ), որոնք արատավորում են փաստաբանի արժանապատվությունը և փաստաբանի համբավը:

Սույն կարգապահական վարույթի ընթացքում հաստատված փաստերը դիտարկելով վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ Արամայիս Մելքոնյանի գործողություններում առկա է Կանոնագրքի վերոնշյալ կետերի խախտման հատկանիշներ:

Մասնավորապես, ինչպես նշվեց վերը, թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում 12.08.2016թ.-ին հրավիրված դատական նիստն անցկացվել է դռնփակ, հետևաբար դատական նիստին ներկա են գտնվել բացառապես նույն գործով հայցվոր Ռուզաննա Տեր-Վարդանյանը, պատասխանող Արամայիս Մելքոնյանը և Ավան

և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մարգարյանը:

Ինչպես պարզ է դառնում վերոնշյալ դատական նիստի արձանագրությունից, Արամայիս Մելքոնյանը վրդովվելով, որ Ռուզաննա Տեր-Վարդանյանը փորձում է ներկայացնել իր կողմից մինչ այդ դատարան ներկայացրած հայցի էությունը ասել է՝ «... **ինձ պետք չի հիմա հայցադիմումը քննենք /. . . / ինձ պետք չի քու հայցը, հիվանդ են արա»:**

Տվյալ պարագայում, Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ չնայած Արամայիս Մելքոնյանը **«հիվանդ են արա»** արտահայտությունն անելուց առաջ ուղղակիորեն չի արտասանել Ռուզաննա Տեր-Վարդանյանի անունը, միևնույնն է ակնհայտ է, որ Արամայիս Մելքոնյանի վերոնշյալ արտահայտությունը ուղղված է եղել հենց Ռուզաննա Տեր-Վարդանյանին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) Դյուլդինը և Կիսլովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (DYULDIN AND KISLOV V. RUSSIA) գործով, անդրադառնալով զրպարտության հասցեականության հարցին դատարանը նշել է՝ *«կոնկրետ գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի մի հանգամանք, որը կստիպի շարքային ընթերցողին զգալ, որ հրապարակման մեջ պարունակվող վիճարկվող պնդումներն ուղղակիորեն սրվեր են գցում անձամբ հայցվորի վրա կամ որ այդ հայցվորը հանդիսացել է քննադատության օբյեկտ»:*

Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամայիս Մելքոնյանի **«հիվանդ են արա»** արտահայտությունն անելուն անմիջականորեն նախորդող արտահայտություններն ակնհայտորեն ուղղված էին հենց Ռուզաննա Տեր-Վարդանյանին, ուստի կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ այդ արտահայտությունը նույնպես ուղղված է եղել հենց Ռուզաննա Տեր-Վարդանյանին:

Ինչ վերաբերում է բուն խնդրո առարկա արտահայտությանը, ապա Խորհուրդն արձանագրում է, որ մեկ փաստաբանի կողմից մյուսին հիվանդ անվանելն, այն էլ դատական նիստերի դահլիճում գործի քննության ընթացքում, չի կարող թույլատրելի համարվել Կանոնագրքի 5.1.2. և 5.2.1.(1) ենթակետերի տեսանկյունից:

Այլ կերպ ասած, Խորհուրդը հաստատված է համարում, որ Արամայիս Մելքոնյանը Ռուզաննա Տեր-Վարդանյանին հիվանդ անվանելով, նրան չի ընդունել որպես մասնագիտական աշխատակից և ոչ քաղաքավարի վերաբերմունք է ցուցաբերել վերջինիս նկատմամբ, ինչպես նաև արատավորել է Ռուզաննա Տեր-Վարդանյանի արժանապատվությունը և նրա համբավը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ*:

Պատասխանողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առել վերոհիշյալ հանգամանքները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ

կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Արամայիս Մելքոնյանին (արտոնագիր թիվ 583) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման համար:***
***2. Փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:***
***3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող Սեդրակ Ասատրյան